Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(24 ապրիլի, 2015 թ.)

Մեծարգո՛ Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Բարեկամ պետությունների պատվարժան նախագահներ եւ պետական այրեր,

Քույր եկեղեցիների հոգեւոր Պետեր եւ բարեջան եկեղեցականներ,

Միջազգային եւ կրոնական կազմակերպությունների մեծարգո՛ ներկայացուցիչներ,

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ եւ մեծապատիվ հյուրեր.

Նվիրական եւ պատմական օր է այսօր. 100-րդ տարելիցն է Հայոց ցեղասպանության: Վերստին համախմբվել ենք Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում՝ ոգեկոչելու մեր սուրբ նահատակների հիշատակը:

Հոգեւոր մխիթարություն է հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի ու Մեզ համար, որ բյուրավոր մեր նահատակների հիշատակի արարողությանը Ձեր ազնիվ մասնակցությունն եք բերում, պատվարժան նախագահներ բարեկամ պետությունների, հոգեւոր Պետեր եւ սիրեցյալ եղբայրներ Քույր եկեղեցիների, կրոնական, պետական եւ հասարակական կառույցների բարձրապատիվ ներկայացուցիչներ: Մեր երախտագիտությունն ենք հայտնում Ձեզ եւ Ձեր երկրների ժողովուրդներին ու իշխանություններին՝ մեր ժողովրդի հանդեպ դրսեւորած հարգանքի համար:

Օսմանյան Թուրքիայի կողմից Ի. դարասկզբին իրագործված Հայոց ցեղասպանությունը մեր նորագույն պատմության մեծագույն ողբերգությունն է, որը համարժեք գնահատական եւ դատապարտում չստանալով՝ նախադեպ դարձավ նոր ոճրագործությունների: Գոհություն Աստծո, այսօր Հայոց ցեղասպանությունը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է. զտնում է ճանաչում եւ դատապարտություն: Մեր ներկայությունն այստեղ ընդգծում է մեր պատասխանատվությունը՝ սերունդներին ավանդելու բռնություններից ու եղեռնագործություններից զերծ խաղաղ եւ ապահով աշխարհ:

Աստծո օրհնությամբ երեկ կատարեցինք սրբադասումը Ցեղասպանության տարիներին «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» իրենց կյանքը զոհաբերած զավակների մեր Սուրբ Եկեղեցու: Այսօր արարատահայաց այս բարձունքից, ուր լուսազգեստ հոգիներն են մեր նահատակների եւ սրբությունն է մեզ վրա հովանի,

բարեխոսական աղոթք ենք վերառաքում երկինք՝ աղերսելով աշխարհին խաղաղություն, մարդկանց մեջ՝ սեր եւ համերաշխություն: Մեր սուրբ նահատակներն այսօր պատգամ են բերում մեզ եւ կոչում լինելու առաքյալներ, առաքյալներ արդարության, դատապարտելու մարդկության դեմ եղեռնագործությունները՝ ցեղասպանությունները, ահաբեկչությունները, մարդու եւ ազգերի իրավունքների ոտնահարումները: Մարդասիրության, արդարության ու խաղաղության հովանավոր մեր սուրբ նահատակները կոչում են մեզ լինելու առաքյալներ ճշմարտության՝ ընդդեմ կեղծիքի քարոզչության եւ տարածման, մերժելու ժխտողականությունը, հաղթահարելու անհանդուրժողականությունն ու անտարբերությունը:

Ցեղասպանության դառը հիշողությունները 100 տարիների ընթացքում չարությամբ ու ոխակալությամբ չեն մթագնել մեր ժողովրդի հոգին: Մեր վշտին ափելություն չի խառնվել, սակայն եղել ենք անհաշտ խարդավանքների, մեր պատմության խեղաթյուրման հանդեպ, եղել ենք աննահանջ՝ ճշմարտության պայքարի մեր ճանապարհին: Մեր ժողովուրդն այսօր շարունակում է ապրել շրջափակման ու պատերազմի վտանգի պայմաններում, դիմակայում է դժվարությունների, իր իրավունքները պաշտպանում մարդու եւ ազգերի իրավունքների գերակայության հավատով:

Մեր սուրբ նահատակների հիշատակի առջեւ վերստին երախտագիտություն ենք հայտնում Հայոց ցեղասպանությունը ճանաչած եւ դատապարտած երկրներին, պետական, կրոնական, հասարակական կառույցներին ու կազմակերպություններին, նաեւ՝ բոլոր պետություններին, ժողովուրդներին եւ անհատներին, ովքեր Ցեղասպանության դժնդակ տարիներին օգնության ձեռք մեկնեցին, ապաստան տվեցին մեր ժողովրդի զավակներին:

Հայրապետիս աղոթքն է, որ մեր ժողովուրդը զորավոր պահի հավատքն ու հայրենյաց սերը, անկասելի՝ իր իրավունքները վերականգնելու կամքը: Հայցում ենք, որ մեր սուրբ նահատակների բարեխոսությամբ խաղաղությունը, արդարությունը, սերն ու ողորմությունը հավերժ թագավորեն երկրի վրա՝ հանուն մարդկության շեն, ապահով ու բարօր կյանքի: